

Մ Ս Բ ՄՏԵՐԻՄ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Հաջածը երկու անգամ
կը հրատարակուի :
Ստորագրութեան տեղն
է իմամ Վ. լի խան վարի
յարկը թիւ 15



Տարեկան գինն է կանխիկ
փութուշ 100 :
Դուրսերէն բաժանորդ
եզոյնելը փոստային
ծախար վճարուին :

ՍԵՊՏԵՄԲԵՐ 12

Գ. ՏԱՐԻ 1863

ԹԻԻ 25—26

ԱՌ. ՄԱՅՐՆ ՀԱՅՍԱՍՆ

Ո՛հ, Հայրենիք, Հայրենիք,
Սերելիք իմ Հայաստան.
Ո՛, դիցազանց ես մայրիկ
Ո՛ դու քաջաց ապաստան :

Ինչու այդպէս լալադին
Սեւ քօղ ճրգած երեսիդ
Դառն արտասուք կը հոսին
Ի վերայ սուրբ ծննդիդ :

Դու որ երբեքն էիր վեհ
Եւ փառահեղն ի տիկնայս,
Ո՛ւր է այն քոյ պերճ նրսեհ
Նրբ բաղմէիր ի մեծն Հայս :

Երբ դու Ռշտոյ նազելի
Ղիւցազանց մէջ պար առեալ
Բիւր զարդերով դեղանի
Շողշողէիր լուսախալ :

Քոյ դեղեցիկ երկրին մէջ
Հազար պալատք կային քեզ,
Փարթամութեամբ լի եւ պերճ
Իբրեւ փառաց ասպարէզ :

Արդ անոնցմէ դու զրկեալ
Փամայութեան կը նստիս

Աւերակօք շուրջ պատեալ.
Երկինք, աւաղ աղետիս :
Աստեղանման քոյ աչքեր
Արտասուաց մէջ միթաղնեալ,
Երկու վտակ են դարձեր
Աղի ջրով հոսեցեալ :

Քոյ զարդերըդ թանկագին
Թշնամեաց ձեռքն է աւար,
Եւ դու այրի վեհ ազդին
Ո՛հ մեացիր անապատ :

Քոյ դիցազանց դատաւերաք
Երկրի եղան հաւասար,
Մանուկներըդ սրտաբեկ
Միշտ քեզ կ'ողբան անդադար :

Քոյ բարգաւաճ հովիտներ
Ուր ուռենեաց շուքին տակ,
Ճեմեալ Հայոց աղջիկներ
Երգ երգէին զերթ սոխակ :

Արդ վայրենեաց որջ եղած
Քոյ թշնամեաց առաթուր.
Անկան կուսանորդ ամօթխած
Մնացին վայրերն այն թափուր :

Այլ Հայաստան մեր սիրուն,
Մի բար այդպէս դառնացին :

Մեք պատրաստ եմք քոյ սիրոյ
Տալ ըզնուէրս իսկ անձին :

Վ. Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

Օգոստոս 8 . Ըռահանով հրատարակած
Յայտարարութիւն Տըւ Ս. Վ. Գ. Գ. Գ. Գ. Գ.
Ժողովին

Տես թիւ 23 — 24

Յայտնի կը նշմարենք ընթերցողք թէ
Վանայ անուծանելի ինկորթն շարժա-
ռիթ՝ ոչ Պողոս Վարդապետ ոչ Շարան
պէյ , ոչ Հոյրապետ սյոյ , ոչ Իգնատիոս
Եպիսկոպոս այլ բուն պատճառը ժողո-
վուրդին հարստահարեալ վիճակի մէջ
նեղուիլն է . և ըստ որում հարստահարե-
լոց պաշտպանն ոչ միսթարիչ և ոչ ալ ա-
նոնց վշտացը դարման յայնքոյն թող
հետեւաբար իրենց ներքին ազդեցու-
թեանը յանձնուած ու բուն կրից մատ-
նուած հասարակութիւն մը ինչ վշտե-
րու օրէնթակոյ կրնայ ըլլալ նոյն և
թերեւս աւելին կը կրեն :

Հայեր , Հայեր , Հայաստանու մէջ մեր
հայրենակիցներուն քաջածը շատ դառն
է բայց ափսոս որ մեզի անձանթ է :

Հայաստանի իրական եւ ողբալի
վիճակը այնչափ անձանթ է նոյն իսկ
մայրաքաղաքս ընակող Հայերուն , որ
դժբաղդաբար կրնանք ըսել թէ՛ մինչ-
գեւ մենք հանգիստ բարձր գլուխներնուս
ներքեւ դրած կը ննջենք , Հայաստանի
ծոցը մեր եղբարք շատ անգամ գազա-
նաբարոյ աւազակաց որոյն ճարակ կըլ-
լան : Ըսածնուս ապացոյց բերենք :

Ձեռք կարծեք թէ աղգասէր կամ
գոնէ մարդկութեան զգացմունք ունե-
ցող անձ մը՝ առանց արտասուաց կար-
գայ հետեւեալ նամակը , որուն ճշմոք-
տութեանը ինքնին երաշխաւոր է անոր
ընտանեկան եւ անձեւ ոճը , եւ զոր
բնագրին պէս յառաջ կը բերենք : Կայ-
սերական բարեխնամ կրօնավարութիւնը
որ ամենայն անկարգութեանց արդար

պատուհասը տալու պատրաստ է , ան-
շուշտ այս շարժադրժութեան հեղինակ-
ներուն ալ արժանաւոր պատիժը պի-
տի հատուցանէ , եթէ անոնց ով ըլ-
լալը ստուգիւ գիտցուի :

Ահա նամակը , որն որ Վանայի մը
գրուած է ի Պոլիս :

Վան . 16 յուլիս 1863 .

Գերապատիւ . . . ազնիւ բարեկամ :

. Հրամանք դրած էիր Ա-
ւետիս եւ Միսակ եղբայր տեղս խրկէր ,
ասոնք ամեն մէկ կողմ կընենք , մենք
հիմա հրամանքիդ ողբալի լուր տանք ,
բայց չիտալ աղէկ . ինչ ընենք այս գի-
շեր ողբալի բան մի պատահեցաւ մեզի
եւ ձեզի , ինչ բանք չենք գիտեր , հի-
մա գիշերս Գրիգոր եղբայրս առ Աստ-
ուած վերափոխեցաւ հոգով : Անիրաւ
գողեր գիշերս տան վրայ դարով 1 խեն-
չարով 2 զարկին եւ մեռուցին եւ Աւե-
տիսն ալ ետքայի բրին . բայց Աւետիսին
բան մը չենք 3 կը ողջանայ Աստուծով .
այս լուր տալու բան չէր , ինչ ընենք
երբ որ ըլլայ պիտորիմացուի , ըսել ա-
ղէկ է քանձ 4 չըսել , օլաքի բամալ հը-
րամանք ունիս մտածելու , բայց հի-
մայ գողեր կըսեն գիտենք ով է , եւ
սօլերն 5 ալ մեռուցեր են տուն փախեր
են , Աստուած տայ Փարշէնի 6 ինչ
ընել միւս փօշտին կը յայտնենք . . . :
Գիտեմ որ դարձ միտք ունիս բայց որ
ինծի տկան լինես այս տարի մի գայ
. աս տարի ալ կեցի տեսնանք
ինչ կընի 7 . տեղս էնպէս գէշ է որ ի-
րիկունը քնանաս չես գիտի առաւօտ
ողջ կընես , շատ գէտ թիւն կայ տե-
ղըս , Աստուած այց մը ընէ , ամենի
տան գող մտին , տէր չունինք , ինչ ը-
նեն կը մարտին , վճիռ չգայ , գողերն
ալ տահա գէշ է , այսկէ կեսավէթ 8 մի

(1) Յարձակելով հասկնալու է : (2) խան-
չեր , գաշն : (3) չ'ըլլար : (4) բան թէ :
(5) ոտքի ամանները : (6) յայտնուի : (7)
կըլլայ : (8) գատավէթ . վիշտ , ցաւ :

բանաստեղծութիւնը , աւելի վաւեր , աւելի սրտաշարժ , ինչպէս են Շէնիէի բանտին մէջ գրած բերթուածները : Այս սոսկալի ատեններս մահն այնչափ սովորական եղած էր , կ'ըսէ Լամարթին Ժիրոմուեանց պատմութեան մէջ , որ բանտարկելոց արտաքոյ կարգի փափաղ մը կը ծնանէր մնացած քանի մը օրերնին կենաց վայելչութիւնները ճշակելու , և բանտէն գլխատման տեղը երթալու միջոցին յանկարծական սիրահարութիւններ կը պատահէին :

Շէնիէի երեակայութիւնն ալ վառ ուեցաւ Քուայնէի օրիորդին սիրովը , որ նոյն բանտին մէջ բանտարկուած էր մահուան ստուերը անոր սրտին մէջ առաւել ևս կ'արծարծէր սիրոյն բոցը , և այն բանտարկեալ արջիւնն ուղարկած տաղերուն գեղգեղալի և տխուր հառաչանքը երբեք ուրիշ բանտէ մը ելած չէ Ահա այն գեղգեղանքը որուն Հայերէն թարգմանութիւնը կուտանք հոս , ուր արջիկը կը խօսի նախ Յեփթայեա լեզուով և չուզէր կենաց դարունը ձգելով մեռնիլ :

ԲԱՆՏԱՐԿԵՍԱԼ ԱՂՋԻԿԸ

- Սուր գերանդին քնքուշ հասկը կը խընայէ ,
- Եւ ողկոյզն ալ ճմլուելէ անկասկած
- Արշալուսոյն անուշ ցօղերը կը մպլէ :
- Ինկ ես անոնց պէս գեղեցիկ եւ մատաղ ,
- Ո՛հ , չեմ ուզեր մեռնիլ երթալ այսպէս վաղ :
- Թէ եւ հիմայ ըլլամ ի մէջ տխրութեանց
- Թող կամակորն ի մահ դիմէ անտրտունջ
- Բայց ես կուլամ եւ կը յուսամ տակաւին :
- Եւ կը ծըռեմ գլուխս Հիւսիսին ի մեռունս :
- Գառն օրերուն կան եւ օրեր քաղցրալի :

« Քաղցր մեղրն ունի եւ համ ձանցրալի :

« Որ ծով չունի իր փոթորիկ մոլեգին :

« Բերրի ցնորքն իմ ծոցիս մէջ կը բնակի

« Ի զուր բանտին պատերը զիս կը ճընչեն :

« Քանզի հոգիս յուսոյն թեւով կը թռչի ,

« Եւ որորդին որորայթէն մեղապուր

« Սոխակի պէս , երկնից դաշտերն անտրխուր ,

« Զուարթ , երջանիկ պիտի ունանամ ես անդրէն :

« Ինձի մեռնիլ , մինչդեռ խաղաղ կը նընջեմ

« Խաղաղ հրակեմ եւ չունիմ ես խայթ խղճի

« Ո՛չ իմ քնոյս , ոչ արթնութեանս իմ ատեն :

« Ինձ բարի լոյս տայ ամեն աչք ժաւտելով

« Ու ամէն տխուր ճակատ զիս հոս տեսնելով

« Գողցես իսկոյն յուրախութիւն փոխարկի :

« Իմ գեղեցիկ ուղեոյս վերջը չեմ հառած :

« Ես դեռ կ'երթամ , եւ իմ ճամբուն ծառերուն

« Առաջին կարգն ալ տակաւին չեմ անցած :

« Հագիւ թէ նոր կենաց կոչունքն ըսկըսայ

« Եւ շրթունքովքս բաժակին մօտեցայ

« Զոր տակաւին ձեռքս բռնած եմ լեցուն :

« Գարունն եմ արդ , եւ կուզեմ հունձքը տեսնել

« Եւ արեւուն պէս եղանակ , եղանակ

« Տարւոյն ամէն տատիճանները չախել :

« Ես նորաքոյս փայլիմ պարծանք պարտիղին

« Առաւօտուն շաղերը նոր գգուեցին

կայսրն ակնածութեամբ ձեռքն Աւետարանին վրայ դրաւ) :

« Քրիստոս չիօխուի , իր վարդապետութեանը մէջ երբեք չվարանիր , և անոր ամենափոքր ստորասութեան վրայ իսկ այնպիսի պարզութեան և խորութեան կնիք մը կայ , որ տգէտն ու իմաստունը միանգամայն կը նուաճէ , որչափ ալ սակաւ մտադիր որ ըլլան :

« Բնաւ տեղ մը չգտնուիր զեղեցիկ դաղափարաց , բարոյական զեղեցիկ սկըզբանց ասանկ շարադասութիւն մը , որ երկնային զօրաց գունդերուն պէս գեղասպառ շաճ կերպով իրարու ետեւէ կուգան , և մեր հոգւոյն մէջ այն զբաղմունքը յառաջ կը բերեն , որ կ'զգայ մարդ ամառուան աղւոր գիշեր մը աստղավառ երկինքին անսահման տարածութիւնը նկատելու ատեն :

« Այս գիրքը չէ թէ միայն մեր միտքը պաշարած է , այլ տիրած ալ է մեր մըտքին , և հոգինս այս գիրքով երբեք մալորելու վստահ չունի :

« Աւետարանը անգամ մը մեր մտքին տէր ըլլալէն ետքը , մեր սրտին ալ կը տիրէ . նոյն իսկ Աստուած՝ մեր բարեկամը . մեր հայրը , և մեր ճշմարիտ Աստուածը կըլլայ : Մայր մը իր զինեցուցած զաւկին վրայ ալ չմաշիր : Հոգին Աւետարանին զեղեցիկութենէն յափշտակուած , ալ ինքզինքին տէր չէ : Աստուած բոլորովին անոր վրայ կը տիրէ , անոր խորհուրդներն ու կարողութիւնները կուղղէ , անկէ ետքը ան հոգին իրենք կըլլայ :

« Ինչ 'զօրաւոր ապացոյց Յիսուսի Քրիստոսի աստուածութեանը : Ասանկ բացարձակ տիրապետութեամբ՝ միայն մէկ նպատակ մը ունի . այսինքն է անհատները մտաւորապէս բարւոյեցել , խղճի մաքրութիւն , ճշմարտին հետ միութիւն , հոգւոյ սրբութիւն :

« Վերջապէս իմ վերջին ապացոյցս աս է . զնոնք թէ երկինքը Աստուած չի կայ . եթէ եղաւ անանկ մէկ մը որ կըրցաւ

կատարեալ յաջողութեամբ յղանալ և 'ի գործ զնել այս հսկայ խորհուրդը , այսինքն Աստուծոյ անունը իր վրայ առնելով Աստուծային զեղազօյն պաշտօնն իրեն սեպհականել , ասիկայ միայն Յիսուս համարձակեցաւ ընելու . միայն ինքը կըրցաւ յայտնապէս ըսել . « Ես եմ Աստուած » . և այս խօսքն ալ շատ տարբեր է . « Ես Աստուած մըն եմ » , և կամ՝ « Աստուածք եմ » , ստորասութիւններն : Պատմութիւնը բնաւ չ'յիշէր թէ եղած ըլլար այնպիսի մէկը որ բացարձակապէս ինքզինքն Աստուած կոչէ :

« Առասպելը՝ բնաւ տեղ մը չ'յիշէր թէ Արամազդն և չաստուածներն իրենք իրենցմէ աստուածացան : Եթէ ասանկ եղած ըլլար , իրենց կողմանէ ալ հպարտութիւնը , այլանշախտութիւնը , ու անտեղի անմտութիւնը վերջին եզրը հասած կըլլար : Զանոնք աստուածացընողներն իրենց յաջորդներն ու առաջին տիրապետողներն եղան : Բոլոր մարդիկ մի և նոյն ցեղէ ըլլալով , Աղեքսանդր ինքզինքը Արամազդայ որդի կըրցաւ կոչել , բայց բոլոր Յունաստան աս խաբէութեան վրայ ծաղրեց : Նաև Հռովմայեցի ինքնակալներուն դից կարգը դասուէին Հռովմայեցոց համար երբեք մեծ բան մը չեղաւ : Մահմէտ և Կոմիլիկիւ սլար՝ զապէս ինքզինքն աստուածութեան պաշտօնեայներ յուցուցին : Նումայի Եւգերիա դիցուհին ուրիշ բան չէր , բայց միայն անտառներու առանձնութենէն ծագած ներշնչութեան մը անձնաւորութիւնը : Հնդկաստանի Պրահման չաստուածները հոգեբանական դիւտ մըն են :

« Ուրեմն հրէայ մը՝ որուն պատմական էութիւնը իր ատենին ամեն պատմական իրողութիւններէն առաւել ըստուգուած է , հիւսան մը որդի ըլլալով , ինչպէս կընայ նախ և առաջ ինքզինքն համար Աստուած , բարձրագոյն էակ , Արարիչ արարածոց ըսել : Ամեն տե-

սակ երկրպագութիւն իրեն կը սեպհա-
կանէ. երբ եկեղեցին ինքը իր ձեռքովը կը
կանգնէ, ոչ թէ քարերով, այլ մարդիկ-
ներով: Աղէքսանդրի ըրած յաղթու-
թիւններուն վրայ կը զարմանան. է՛հ,
ուրեմն, ահա յաղթող մը որ ՚ի շահ իւր
կը զրաւէ, կը միացնէ, իրեն կը յօդէ
ոչ թէ ազգ մը, այլ մարդկային ազգը:
Ի՛նչ սքանչելի բան:

« Մարդկային հոգին բոլոր իր կարու-
ղութիւններովը Քրիստոսի էութեան
մասունքը կըլլայ: Եւ ի՞նչպէս: Անանկ
հրաշքով մը որ ՚ի վեր է բան զամենայն
հրաշս:

« Մարդոց սէրը կուղէ, այսինքն ան-
բանը որ այս աշխարհի մէջ ստանալն ա-
մենագոթուար է. ան բանը՝ զոր իմաս-
տուն մը սարսափ տեղը մէկ քանի բարե-
կամներէ, հայր մը իր զաւակներէն, կին
մը իր ամուսինէն, եղբայր մը իր եղբոր
մէն կը խնդրէ. մէկ խօսքով, սիրտը, աս
է իրեն համար ուզածը, բացարձակապէս
կը պահանջէ, և խօսոյն կը յաջողի: Անոր
աստուածութիւնը ասով կը սահմանւի:

« Աղէքսանդր, Աեսար, Աննիբադ,
Լուգովիկոս ԺԳ. իրենց բոլոր հանձար-
ովը ՚ի գերեւ ելան: Աշխարհի յաղթեցին,
և չիրցան բարեկամ մը ունենալ: Մեր
օրերուն մէջ կարելի է որ Աննիբադը,
Աեսարը, Աղէքսանդրը սիրողը միայն ես
եղած ըլլամ: Մեծն Լուգովիկոս ԺԳ-ը
որ Պաղղկայի և աշխարհի մէջ այնչափ
փառք թողոց, իր բոլոր տէրութեանը
և նոյն իսկ իր ընտանեացը մէջ բարե-
կամ մը չունէր: Իրաւ է որ մենք մեր
զաւակները կը սիրենք. ի՛նչ բանի հա-
մար. բնութեան մէկ ազգումին, Աս-
տուծոյ մէկ կամացը, և հարկաւորու-
թեան մը կը հնազանդինք, որ կենդա-
նինքն անգամ կը ճանչնան և կը կա-
տարեն, բայց ո՛րչափ տղաքներ մեր զըգ-
ուանքներուն և մեր իրենց համար տա-
րած այնչափ խնամքներուն անզգայ են:
Ո՞րչափ ապերախտ տղաքներ կան:
Պէրթրան զօրապետ, միթէ զաւակներդ
քեզ կը սիրէ՞ն դու զանոնք կը սիրես.
բայց ՚ի դարձիդ անոր փոխարէնը ըն-
դունելու ապահով չես: Ո՛չ բու ըրած

բարիքներդ և ո՛չ բնութիւնը չպիտի յա-
ջողին անոնց ան սէրը ներշնչել՝ զոր քը-
րիստոնէայներն իրենց Աստուծոյն հա-
մար ունին: Ե՛թէ դուն մեռնելի, քու
զաւակներդ անտարակոյս քու հարստու-
թիւնդ վատնած ատենին քեզ պիտի
յիշէին. բայց քու թոռներդ հազիւ պի-
տի գիտնային թէ դուն աշխարհք եկած
ես. և սակայն դուն Պէրթրան զօրա-
պետն ես, ու կղզիի մը մէջ ենք, և ըն-
տանեացդ կարօտէն զատ ուրիշ մտմը
տուր չունիս:

« Քրիստոս կը խօսի, և ահա ազգք
և ազլնք՝ արեան կապերէն և որ և իցէ
միութենէ մը աւելի նուիրական, աւելի
կարեւոր կապերով անոր հետ կը բեղմն
և կը միաւորին: Անանկ սիրոյ բոց մը կը
վառէ որ անձնասիրութիւնը կը մառէ և
ուրիշ որ և իցէ սիրոյ կը յաղթէ:

« Անոր աս հրաշքը տեսնալէ ետքը
աշխարհս ստեղծող բանին ի՛նչպէս չհա-
ւատանք:

« Օրէնսդիրներն աս խորհրդաւոր սի-
րոյն գաղափարը չունեցան, որն որ զը-
թութեան գեղեցիկ անունին տակ քը-
րիստոնէութեան էութիւնն է:

« Որովհետեւ վառագի մէջ ինչպէս չէին
դիւրանար, և մարդ ինքզինքը սիրել տա-
լու մէջ իր անկարողութեանը խորին ըզ-
գացմունքն իր մէջը կը կրէ:

« Ուստի, Քրիստոսի ամենամեծ քս-
քանչելի բանը, մարդասիրութեան թա-
ղաւորութիւնն է: Միայն ինքը կրցաւ
մարդոց սիրտը բարձրացնել մինչև ան-
տեսանելին, մինչև ժամանակի զօհր. աս
անձնասիրութիւնը ինքը ստեղծելով
երկինքին ու երկրին մէջ տեղը կապ մը
հաստատեց: Անոնք որ անկեղծաբար ա-
նոր կը հաւատան. աս հիանալի, գերբե-
նական, վեհագոյն սէրը կ'զգան, սքանչե-
լիք, զօր մարդուս զօրութիւնն ու միտքը
մէկնելու անկարող է, սրբազան հուր՝
զոր այս նոր Պրոմէթէոսը տուաւ աշխար-
հիս. Ժամանակը՝ այս ահագին կործանիչը
չպիտի կրնայ այս սրբազան կրակին ոչոյժը
սպառել և ոչ տեղորոթիւնը չափել: . . . Ես
Նաբօլեոնա աւելի այս բանին կը զարմա-
նամ, քանզի շատ անգամ ասոր վրայ մը-

տածեր եմ: Եւ Քրիստոսի աստուածու-
թիւնը ցուցնողն առ է:

Ես ալ շատ մարդիկներ տեսաւ քա-
ռած եմ, որոնք ինծի համար կը մեռնե-
ին: (Աստուած չընէ որ բազմաթիւ ես
զօրաց անձնուէր եռանդը քրիստոնէական
սիրոյ եռանդին հետ՝ որոնք իրարմէ շատ
տարբեր են): Բայց հարկաւ պէտք էր որ
ես ներկայ ըլլայի, պէտք էր նայուած-
քիս էլեքտրականութիւնը, ձայնս վեր-
ջապէս գոնէ իմ մէկ խօսքս, և նուիրական
կրակը սրտերու մէջ կը վառէի: Իրաւ որ
հրապուրելի մոգական զօրութեան գաղտ-
նիքն ունիմ, բայց զայն մէկու մը չսիրտի
կրնամ հաղորդել, իմ զօրապետներէս և
ոչ մէկը չկրցաւ այդ բանին ձեռնհաս ըլ-
լալ, իմ անունս և սէրն սրտերու մէջ ան-
մահացնելու, ու առանց նիւթականի
սրտերու մէջ սքանչելիք գործելու կարո-
ղութիւնն ու զաղանկը չունիմ:

«Հիմա ես որ Ս. Հեղինէի կղզին եմ,
հիմա որ ես միմալ առ Ժայռին վրայ դամ-
ուած եմ, ինծի համար ո՞վ կը պատե-
րազմի, ու տէրութիւններու կը յաղթէ:
Ո՞ր մնացին այն մէր փաղաքօհները:
Միեւ զիս կը յիշեն. Եւրոպայի մէջ ին-
ծի համար ո՞վ կը շարժի. Ո՞վ ինծի հա-
ւատարիմ մնաց. իմ բարեկամներս ո՞ր
են. — Ս. յո՛ երկու կամ երեք հատ կան
թողքու հաւատարմութիւնդ անմահ մը.
նայ, դու և իմ աքսորիս մասնակից եղար
ու միսիթարեցիք:

Հոս կայսեր ձայնը հեզնական, տը-
խուր և տրամական մասնաւոր ձև մը առաւ:
«Ս. յո՛, մեր բոլոր կեանքը թաղին և
վեհապետութեան ամեն փառօք փայլե-
ցաւ, Պէրթրան, բոլ կեանքդ ալ ինձ
մով ոսկեզօծեալ մեր պայծառութեամբը
անգրադարձ կը ցոլանար ինչպէս զինուո-
րաց անկեղանոցին գմէթը արեւուն ճա-
ռագայթներով: Բայց դժբաղդութիւն
ներ վրայ հասնելով, տրին կամաց նը-
սեմացաւ, թշուառութեան և նախատա-
նայ հեղեղը՝ որ ամեն օր լրանիս կը թա-
փէ եւ վերջի մասն ալ կը տանի: Պէրթ-

րան զօրապետ, մենք ալ ուրիշ բան չենք
բայց կապար, և բիշ Ժամանակէն հող
պիտի ըլլամ: Ս. հա առ է մեծամեծ մարդ-
կանց վիճակը: Կեսարին ու Ալէքսանդ-
րին վիճակն ալ առ էր: Եւ մարդիկ մեզ
կը մոռնան, ու աշխարհակալի մը անու-
նը ինչպէս նաեւ կայսեր մը անունը միայն
վարժարաններու մէջ շարադրութեան
նիւթ մը կը լըլայ: Մեր քաջութեան գործե-
րը իմաստակ վարժապետի մը դաւադանին
տակ կ'իյնան, որ ուզածին պէս զմեզ
կամ կը՝ պարսաւէ կամ կը՝ ներբողէ:

«Մարդիկ մեծն Լուդովիկոս Ժ. Գին
վրայ որչափ զանազան դատաններ ընե-
լու համարձակեցան: — Մեծ Թագաւո-
րը մեռնելուն պէս, Վերսայի պալատը
նշարանին մէջ առանցին ձգուեցաւ
պալատականներն անոր վրայ անփայթ է,
ին և գուցէ կը ծաղրէին ալ Ս. Իկայալ,
իրենց տէրը չէր, այլ դիակ մը, գաղաղ
մը, գերեզման մը, և մօտալուտ լուծ-
ման սոսկում մը:

«Վայրկեան մը ետքը... ահա իմ
վիճակս, ասիկայ ինծի ալ պիտի պատահի:

«Մոգիական սակաւաթիւ տութեան
սղանուած, Ժամանակէն յառաջ կը մեռ-
նիմ, և մարմինս հողին պիտի տրուի ուր
որդերուն ճարակ ըլլայ: Ս. հա մեծն Նա-
բօլէնի մօտալուտ վիճակը: Իմ խոր թըշ-
ուառութեանս, և քարոզութեանս սիրուած
պաշտուած ու բոլոր տիեզերքին մէջ
կենդանի մնացած Քրիստոսի յաւիտե-
նական Թագաւորութեանը մէջ տեղ
ի՞նչ մեծ վիճ կայ: Ս. Իկա մեռնի՞լ է,
տալիլ չէ՞ մի. ահա Քրիստոսի, ահա
Աստուծոյ մահը: »

Թարգմանեաց
Նոյեմի Տ. Գեորգեան

ԽՐԲԱՅԻՐ—ՏՆՕՐԷՆ

Ա. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

Ա. ՀԱՄԱԶԳՆԵՆ ՏՅՄԵՆ
ԽՐԱՍ ԸՆԼԻ ԲԱՆ ԹԻ 13